ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

21. 10. 2023 *ք. Իջևան*

Մասնակցում էր ֆակուլտետի գիտական խորհրդի 24 անդամներից 16-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2023-2024 ուսումնական տարվա առկա ուսուցման I կիսամյակի 1-ին ընթացիկ ստուգումների և քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
2. Ֆակուլտետի՝ 2023-2024 ուստարվա առկա ուսուցման ավարտական աշխատանքների թեմաների հաստատում (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
3. 2023-2024 ուստարվա I կիսամյակում ֆակուլտետում պրակտիկաների կազմակերպման ընթացքի մասին (զեկուցողներ՝ **ամբիոնների վարիչներ, Կ. Պողոսյան**):
4. Հեռակա ուսուցման՝ 2023-2024 ուստարվա I կիսամյակի բակալավրի և մագիստրատուրայի ուսումնական պարապմունքների նախապատրաստական աշխատանքների մասին (զեկուցողներ՝ **Կ. Պողոսյան, Վ. Չոբանյան**):

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը: Նա նշեց, որ 2023-2024 ուստարվա I կիսամյակի 1-ին ընթացիկ ստուգումները և քննությունները, ըստ ժամանակացույցի, իրականացվելու են ս.թ. հոկտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 4-ն ընկած ժամանակամիջոցում:

Նախապես կազմվել են ընթացիկ ստուգումների և քննությունների կազմակերպման ժամանակացույցները, դրանք քննարկվել են ամբիոններում, այնուհետև մասնակի շտկումներից հետո ներկայացվել են հաստատման: Ժամանակացույցները տեղադրվել են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պաշտոնական կայքէջում, դրանց վերաբերյալ իրազեկվել են դասախոսները և ուսանողները: Ուսումնամեթոդական վարչության կողմից ֆակուլտետին տրամադրվել են

պահանջված քանակով ընթացիկ քննությունների տետրեր: Կատարված նախապատրաստական աշխատանքներից հետո ֆակուլտետը պատրաստ է իրականացնելու քննաշրջանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Դեկանի տեղակալ Վ. Չոբանյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի մասին ևս զեկուցեց ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը: Զեկուցողը նշեց, որ այս ուսումնական տարում ֆակուլտետում կան առկա ուսուցման 7 կրթական ծրագրերով ավարտական կուրսեր:

Ուսանողներին տրամադրվող ավարտական աշխատանքների թեմաները քննարկվել են մասնագիտական ամբիոններում, կատարվել են անհրաժեշտ շտկումները և փոփոխությունները, ստուգվել է թեմաների համապատասխանությունը կրթական ծրագրերի վերջնարդյունքներին: Այնուհետև թեմաները տրամադրվել են ուսանողներին և ներկայացվել ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ավարտական աշխատանքների թեմաները:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցեցին ամբիոնների վարիչները և ֆակուլտետի դեկանը: Նշվեց, որ 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակում ֆակուլտետում ընթացքի մեջ է առկա ուսուցման 4 մանկավարժական պրակտիկա՝ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Ռուսաց լեզու և գրականություն»

կրթական ծրագրերի 3-րդ և 4-րդ կուրսերում: Վերոնշյալ պրակտիկաները կազմակերպվել են Իջևանի թիվ 1 հիմնական դպրոցում՝ 59 ուսանողի մասնակցությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2023-2024 ուստարվա I կիսամյակում ֆակուլտետում պրակտիկաների կազմակերպման ընթացքի մասին զեկուցողների հաղորդումներն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 4-րդ հարցի մասին զեկուցեցին ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը և դեկանի տեղակալ, հեռակա ուսուցման «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսական կրթական ծրագրի համակարգող Վ. Չոբանյանը:

Զեկուցողները նշեցին, որ հեռակա ուսուցման՝ 2023-2024 ուստարվա I կիսամյակի բակալավրի ուսումնական պարապմունքները սկսվելու են ս.թ. նոյեմբերի 1-ից, իսկ մագիստրատուրայինը՝ նոյեմբերի 15-ից: Ֆակուլտետում հեռակա ուսուցում է իրականացվում բակալավրի 4 կրթական ծրագրով՝ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Հոգեբանություն», «Պատմություն» կրթական ծրագրերի I-V կուրսերում և «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի IV կուրսում:

Իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ, մասնավորապես՝ կազմվել են II-V կուրսերի դասացուցակները (քանի որ ընդունելության քննություններն ընթացքի մեջ են, առաջին կուրսեր դեռ չեն ձևավորվել):

«Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսական կրթական ծրագրով այս ուսումնական տարվա ընդունելության համար ներկայացվել է 20 դիմում, 1 դիմորդ չի ներկայացել քննությանը: Ընդունելության քննության արդյունքները գոհացուցիչ են. ընդունվել է 19 դիմորդ, որոնցից 7-ը ստացել է «գերազանց», 12-ը՝ «լավ»:

Հումանիտար գիտությունների ֆակուլտետը պատրաստ է իրականացնելու հեռակա ուսուցման՝ այս կիսամյակի ուսումնական պարապմունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հեռակա ուսուցման՝ 2023-2024 ուստարվա I կիսամյակի բակալավրի և մագիստրատուրայի ուսումնական պարապմունքների նախապատրաստական աշխատանքների մասին զեկուցողների հաղորդումներն ընդունել ի գիտություն:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Կ. Պողոսյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. Վանյան